ՀՐԱԺԵՇՏ ՄԵԾԱՆՈՒՆ ԳՐՈՂԻՆ

ՄԹԱԾՄԻՆԴԱՆ՝ ՃԱԲՈՒԱ ԱՄԻՐԵՋԻԲԻԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՎԱՆ

Դեկտեմբերի 17-ին, Մթածմինդայի գրողների եւ հասարակական գործիչների պանթեոնում, անցկացվեց վրաց ճանաչված գրող Ճաբուա Ամիրեջիբու հուղարկավորության արարողությունը: Հուղարկավորությանը ներկա էին Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին, Վրաստանի կառավարության անդամներ եւ խորհրդարանի պատգամավորներ, մտավորականության ներկայացուցիչներ:

Հիշեցնենք, որ Ճաբուա Ամիրեջիբին վախճանվեց դեկտեմբերի 13-ին, 92 տարեկան հասակում:

Վրաց գրողների եւ հասարակական գործիչների պանթեոն Մթածմինդան գտնվում է Թբիլիսիի նույնանուն լեռան լանջին, Սուրբ Դավիթ եկեղեցու տարածքում: Այստեղ են թաղված ռուս ճանաչված գրող, դիվանագետ Ալեքսանդր Գրիբոյեդովի (1795-1829) եւ նրա կնոջ՝ Նինո Ճավճավածեի (1812-1857) շիրիմները: Այստեղ են թաղված նաեւ բանաստեղծ Նիկոլոզ Բարաթաշվիլին (1817-1845), լուսավորիչ Յակոբ Գոգեբաշվիլին (1840-1912), գրող Իլիա Ճավճավածեն (1837-1907), բանաստեղծ Գալակտիոն Տաբիձեն (1892-1959), դերասանուհի Վերիկո Անջափարիձեն (1897-1987) եւ արվեստի ու հասարակական ճանաչված այլ գործիչներ:

Վերջինը, 2010 թվականին, այստեղ հուղարկավորեցին բանաստեղծ Մուխրան Մաճավարիանուն:

Դրանից հետո, Թբիլիսիի քաղաքապետարանը հայտարարեց, որ պանթեոնում իբր ազատ տեղեր չկան, եւ այն փակվում է: Հասարակության շատ ներկայացուցիչներ այդ հայտարարությունը գնահատեցին որպես իշխանությունների նկատմամբ այն ժամանակ ընդդիմադիր տրամադրված գրող Ճաբուա Ամիրեջիբիին այնտեղ հուղարկավորելուց հրաժարում: Ինքը՝ գրողը, ոչ առանց ծաղրանքի հայտարարեց, որ իր հուղարկավորության վայրը կորոշի Վրաստանի ժողովուրդը: Եվ ահա երկրի կառավարությունն ընդունեց որոշում՝ վրաց ճանաչված գրողին հուղարկավորել այնտեղ, որտեղ նա արժանի է, այսինքն՝ Մթածմինդայի պանթեոնում:

ԲԵՆԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆ - 100

ԿԵՐՊԱՐ՝ ՄԻՏՎԱԾ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆԸ

Վիրահայոց թեմի Նինոծմինդայի շրջանի Ռաֆայել Ջավախք Ղարսլյանի անվան նորաբաց մշակութային կենտրոնում, դեկտեմբերի 12-ին հանդիսավորապես նշվեց վիրահայ անվանի արձակագիր, լրագրող Բենիկ Սեյրանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանը: Հավաքվել էին շրջանի մտավորականության ներկայացուցիչներ՝ գրողներ, մանկավարժներ, լրագրողներ, գրադարանավարներ:

Իր ելույթում, «Վերնատուն» միության նախագահ Ժ.Սնխչյանը մեծարանքի եւ գնահատանքի խոսքեր ուղղեց անվանի գրողի հասցեին, որի բեղուն գրչի արդյունքը եղան ոչ միայն նրա 50-ից ավելի հայերեն, վրացերեն եւ այլ լեզուներով տպագրված հիանալի գրքերը, այլեւ նրա բուռն գործունեությունը՝ որպես Վրաստանի գրողների միության հայկական բաժանմունքի նախագահի, նաեւ՝ այդ բաժանմունքի տարեգրքի խմբագրի, «Սայաթ-Նովյան վարդատոնի», «Գարունը գարնան մեջ» փառատոնի կազմակերպչի եւ վարողի, ականավոր լրագրողի անցած ուղին: Հանդիսավարզեկուցողը պատմեց Բենիկ Սեյրանյանի կյանքի, որպես իսկական թբիլիսահայի, ընկերական շրջապատում ունեցած հմայքի, նրա հրաշալի ընտանիքի մասին:

Միջոցառման ընթացքում ելույթներ ունեցան նրանք, ովքեր անձամբ շփվել էին մեծ գրողի հետ, նաեւ նրանք, ովքեր գրողին գիտեին կա՛մ նրա հեղինակած գրքերից, կա՛մ «Վրաստան» թերթի էջերից:

Ապա տեղի ունեցավ գրքերի նվիրատվություն՝ հանրային գրադարաններին: Ընթերցողին ընծայվեցին վերջերս Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակութային կենտրոնի միջնորդությամբ եւ Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի միջոցներով լույս տեսած Սերգեյ Առաքելյանի եւ Հովհաննես Մարիկյանի գրքերի օրինակներ, ինչպես նաեւ վերջին տարիներին տպագրած գրքերը գրադարանային համակարգին նվիրեց Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության Ջավախքի բաժանմունքի ղեկավար Ալբերտ Իսոյանը:

Միջոցառումը զարդարեցին Բ.Սեյրանյանի, Ս.Առաքելյանի, Հ.Մարիկյանի եւ Ա.Իսոյանի գրքերից ընթերցված հատվածներն ու բանաստեղծությունները:

Հոբելյանական ցերեկույթի կազմակերպմանը իրենց աջակցությունն էին բերել Նինոծմինդայի գրադարանային համակարգի (տնօրեն՝ Ցողիկ Խաչատրյան) եւ սովորող երիտասարդության արվեստի «Արեւիկ» շրջանային կենտրոնի (տնօրեն՝ Աստղիկ Դարբինյան) աշխատակիցները:

ՍԱԹԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ք. Նինոծմինդա

ԻՐԱՎԱԿԱՆ

ՆԵՆԳԱՇՈՐԹՈ՞ՒՄ. ՍԱԿԱՅՆ Ո՞ՒՄ ՀԱՍՑԵՈՎ

«Միասնական ազգային շարժման» գլխավոր քարտուղար, Վրաստանի նախկին վարչապետ Վանո Մերաբիշվիլին, Վրաստանի գլխավոր դատախազ Օթար Փարցխալաձեին մեղադրեց նենգաշորթության մեջ:

Քութայիսիում անցկացվող դատավարությանը, Վանո Մերաբիշվիլու հայտարարության համաձայն, դեկտեմբերի 13-ի գիշերվա ժամը 1-ն անց 30-ին իրեն բանտից տարել են դատախազի հետ հանդիպման: Նախկին վարչապետի հավաստմամբ, գլխավոր դատախազը իրեն ներկայացրել է վերջնագիր. եթե ինքը դատախազությանը չօգնի նախկին վարչապետ Զուրաբ Ժվանիայի գործի հետաքննության ընթացքում եւ չտա նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու բանկային հաշիվների համարները, ապա «շատ կփոշմանի»: Մերաբիշվիլին հայտարարեց նաեւ, որ Փարցխալաձեն խոստացել էր այդ դեպքում կտրուկ վատացնել նաեւ բանտում նրա գտնվելու պայմանները:

Ընդսմին, Վանո Մերաբիշվիլին նշեց, որ մեկուսարանում տեղակայված տեսախցիկներով կարող են ստուգել բանտի տարածքից իրեն դուրս բերելու փաստը: Արձագանքելով «Միասնական ազգային շարժման» գլխավոր քարտուղարի հայտարարությանը՝ այդ կուսակցությունը բարձրացրել է Օթար Փարցխալաձեին՝ Մերաբիշվիլու դատավարության գործից հեռացնելու պահանջ: Իրենց հերթին, Վանո Մերաբիշվիլու փաստաբանները քրեակատարողական նախարարությունից պահանջել են բանտում գտնվող բոլոր տեսախցիկների վերջին շաբաթվա ընթացքում կատարած տեսագրությունները:

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին երկրի գլխավոր դատախազությանը եւ քրեակատարողական նախարարությանը կոչ է արել հստակ պատասխան ներկայացնել Մերաբիշվիլու մեղադրանքներին:

Վրաստանի գլխավոր դատախազությունը տարածած պաշտոնական հայտարարության մեջ կտրականապես հերքում է Վանո Մերաբիշվիլու Քութայիսիի դատավարության ժամանակ տարածած հայտարարությունը: «Մերաբիշվիլու հայտարարությունն անհեթեթություն է եւ չի համապատասխանում իրականությանը: Գլխավոր դատախազությունը կտրականապես հերքում է այդ անձի վրա ճնշման փաստը եւ ընդգծում, որ այն բանից հետո, երբ Մերաբիշվիլու դատական գործը թեւակոխել է եզրափակիչ փուլ, մեղադրյալների եւ նրանց կողմնակիցների կողմից իրականացվում են տարբեր գործողություններ՝ ուղղված հասարակայնությանը թյուրիմացության մեջ գցելու եւ դատավարության մասնակիցների վրա ճնշում գործադրելուն»,- ասված է հայտարարության մեջ:

Իր հերթին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ Վանո Մերաբիշվիլու հայտարարությունը կարելի է ընկալել՝ որպես նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու նենգաշորթման փորձ:

«Բացառված չէ, որ նա այդպիսով փորձում էր շանտաժի ենթարկել իր նախկին պետին՝ Միխեիլ Սաակաշվիլուն՝ շեշտը դնելով Ժվանիայի մահվան անբացատրելի հանգամանքների ու Սաակաշվիլու ֆինանսական ռեսուրսների վրա»,- հայտարարեց վարչապետը: Միաժամանակ, նա նշեց, որ դա նոր իշխանության սադրանք է, նոր դատախազի վարկաբեկման փորձ կամ, հնարավոր է, «դա պայմանավորված է այն վախի հետ, որը կապված է Ժվանիայի անձնական պահակախմբի ձերբակալության հետ»,- ընդգծեց վարչապետը:

ՆՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Վրաստանի գլխավոր դատախազությունը Թբիլիսիի քաղաքապետին ներկայացրել է նոր մեղադրանք: Ինչպես հայտարարեց դատախազության ներկայացուցիչը, Գիգի Ուգուլավան մեղադրվում է բյուջետային միջոցների յուրացման համար հանցախմբի ստեղծման մեջ:

Խոսքը վերաբերում է Թբիլիսիի վերակառուցման եւ զարգացման հիմնադրամից 48 միլիոն լարիի ծախսմանը:

Հիշեցնենք, որ ավելի վաղ նա մեղադրվում էր «Իմեդի» հեռուստաընկերության փայաբաժնի սեփականացման եւ Ռիկեի զբոսայգու հետ կապված մեքենայություններում:

Իր հերթին, Գիգի Ուգուլավան նոր մեղադրանքները գնահատում է որպես Բիձինա Իվանիշվիլու վրեժխնդրության շարունակություն: Նրա խոսքերով, այս ամենը կապված է մոտալուտ տեղական ինքնակառավարման ընտրությունների հետ:

Թբիլիսիի վերակառուցման եւ զարգացման հիմնադրամից կատարած ապօրինի ծախսերի մեղադրանքով, մինչ այդ, ձերբակալել էին մայրաքաղաքի հին Թբիլիսիի շրջանի վարչության ղեկավար Լաշա Փուրցխվանիձեին եւ նրա տեղակալ Կոբա Խարշելաձեին: Դատախազությունում այդ գործով հարցաքննվել են քաղաքապետարանի աշխատակիցներ Դավիթ Ալավիձեն, Դավիթ Ավալիանին եւ Ալեքսի Տաբուաշվիլին:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Խորագիրը վարում է «Վրաստան» թերթի իրավաբանական խորհրդական ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻՆ:

Ինչպես արդեն հաղորդել ենք, «Վրաստանի աշխատանքային օրենսգիրք» օրգանական օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2013 թվականի հուլիսի 4-ից:

Ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում խմբագրության փոստով ստացված այն հարցերի պատասխանները, որոնք նոր օրենսդրության համաձայն, վերաբերում են աշխատանքային ժամանակին, վարձատրությանը, արձակուրդին (այդ թվում՝ հղիության, ծննդաբերության եւ երեխային խնամելու պատճառով), անվտանգ եւ առողջ աշխատանքային պայմանների ստեղծմանը, աշխատանքային հարաբերությունների ընդհատման կամ դադարեցման կարգին ու պայմաններին:

Հարց. *Խնդրում եմ պարզաբանել աշխատանքային ժամանակ եւ աշխատանքային ժամանակի տեւողություն հասկացությունները:*

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ախալքալաքի

Պատասխան. Միանգամից նշենք, որ աշխատանքային ժամանակը իրավական ժամանակի այն տեւողությունն է, որի ընթացքում աշխատողը պետք է կատարի ծառայական պարտականությունները՝ աշխատանքային կարգուկանոնին համապատասխան: Եթե մինչեւ 2013 թվականի հուլիսի 4-ը գործատուի կողմից սահմանված աշխատանքային շաբաթվա տեւողությունը 41 ժամ էր, ապա, օրենսգրքում փոփոխություններ կատարելուց հետո, այն հավասարեցվել է հանրային աշխատողների (պետական պաշտոնյաների) աշխատանքային պայմաններին եւ նվազեցվել է մեկ ժամով՝ կազմելով 40 ժամ: Ընթացիկ տարվա հուլիսի 4-ից սահմանվեց նաեւ, որ յուրահատուկ աշխատակարգ ունեցող արտադրությունում, որտեղ աշխատանքային գործընթացը նախատեսում է 8 ժամից ավելի տեւողության անընդմեջ աշխատակարգ, աշխատանքային ժամանակի տեւողությունը չպետք է գերազանցի շաբաթական 48 ժամը: Ընդսմին, աշխատանքային ժամանակի մեջ չեն մտնում ընդմիջման եւ հանգստյան ժամանակները:

Նաեւ ավելացնենք, որ աշխարհում բոլորից շատ տարածված է 5-օրյա աշխատանքային շաբաթվա մոդելը: Ինչպես մինչեւ 2013 թվականի հուլիսի 4-ը, այնպես էլ՝ դրանից հետո ընդունած փոփոխությունների եւ լրացումների արդյունքում, Վրաստանի աշխատանքային օրենսգիրքը չի խախտել աշխատանքային շաբաթվա տեւողության վերաբերյալ վերոնշյալ կարգը, սակայն չի սահմանել նաեւ, թե քանի օր է կազմելու աշխատանքային շաբաթը: Այդ պատճառով, մեր երկրում աշխատանքային օրվա տեւողությունը կարող է սահմանվել՝ ելնելով նրանից, թե գործատուի կողմից աշխատանքային քանի շաբաթ է ծրագրված:

Հարց. *Խնդրում եմ պարզաբանել՝ աշխատանքային նոր օրենսգիրքը նախատեսո՞ւմ է, արդյոք, անչափահասների (մինչեւ 18 տարեկանների) եւ ծանր ու վնասակար պայմաններում աշխատողների համար աշխատանքային ժամանակի նվազեցման հանգամանքը:*

Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ
Մառնեուլի

Պատասխան. Բնականաբար, նոր օրենսգրքում այդ ուղղությամբ որոշակի փոփոխություններ են կատարվել, ըստ որի, 16-ից մինչեւ 18 տարեկան անչափահասների աշխատանքային ժամանակը չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, իսկ 14-ից մինչեւ 16 տարեկանների աշխատանքային շաբաթը կազմելու է 24 ժամ: Ինչ վերաբերում է ծանր եւ վնասակար պայմաններում աշխատողների աշխատանքային ժամանակին, ապա աշխատանքային օրենսգրքում այդ մասին ոչինչ չի ասվում:

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

Î°Üò²Ô²ÚÆÜ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Վերջերս նկատելի խորթություն է ծագել իմ ու ամուսնուս միջեւ: Զգում եմ, որ խոսելիս, ավելի ստույգ ինչ լսելիս, շատ անուշադիր է, իսկ դա ինչ համբերությունիս հանում է, սկսում եմ կոպտել: Եվ գրեթե այդպես՝ ամեն օր: Չգիտեմ՝ ի՞նչ անել:

Ս.Թ.

Թբիլիսի

Եթե դուք օրինավոր ընտանիք ունեք, պարզապես աշխատանքից տուն վերադարձող ձեր ամուսնուն ավելի շատ վերջին լուրերն են հետաքրքրում, քան անձնական հարաբերությունները, հնարավոր է, որ պատճառը տարիքային ճգնաժամն է: Հարաբերությունների ամենածանր ճգնաժամը վրա է հասնում այն ժամանակ, երբ զգացմունքները թուլանում են: Խոսեք եւ փորձեք սերը պահպանել: Խուսափեք բացասական նախազգուշացումներից ու մտքերից: Հաճախ է պատահում, որ աշխատանքի մեջ հաջողակ, հրաշալի կին ու երեխաներ ունեցող տղամարդը պարզապես դժգոհ է լինում ինքն իրենից: Դա անհատական ճգնաժամ է, երբ մարդը չի կարողանում հասկանալ իր դժգոհության պատճառները եւ ինքնաբերաբար իր անբավարարությունը զուգընկերոջ գլխին է թափում: Այդ վիճակից հնարավոր է դուրս գալ, եթե մարդը պատրաստ է երկխոսության եւ լիովին վստահում է ձեզ: Փորձեք նրան հասկացնել, որ դուք ցանկացած պահի պատրաստ եք լսել եւ օգնել նրան: Ձեր օգնությունն ու մասնակցությունն այս դեպքում պարզապես անհրաժեշտություն է:

²è úðÚ²

ԻՆՉՊԵՍ ՆՎԵՐ ԸՆՏՐԵԼ

Չգիտեմ՝ ձեզ մոտ ինչպես է, սակայն միշտ, երբ պատրաստվում ենք հյուր գնալ, ինչ անհանգստացնում է մի կնճռոտ հարց՝ ի՞նչ նվեր տանել: Անկեղծ ասած, իմ երեւակայությունն արդեն չի բավարարում այդ հարցին պատասխանելու համար: Գուցե դուք օգնեք:

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բաթումի

Իհարկե, դա ճաշակի խնդիր է, սակայն թանկարժեք իրեր գնելու կարիք չկա: Դրանով մենք նվեր ստացողին եւ մյուս հյուրերին, որոնց գրպանին դա հարիր չէ, դժվարին կացության մեջ ենք դնում: Նվերը պետք է նախապես ընտրել, մտածված կերպով՝ ստացողի հետաքրքրությունները հաշվի առնելով: Միայն այդ դեպքում այն կուրախացնի:

Սեփական ձեռքերով պատրաստած ցանկացած իր շատ ավելի մեծ ուրախություն է պատճառում: Եվ հակառակը, դուք անտարբերություն կդրսեւորեք, եթե նվերը որեւէ ոչ պիտանի իր լինի: Չզարմանաք, եթե ձեզ հետ էլ նույն կերպ վարվեն:

Անձնական իրեր, օրինակ, կանանց՝ օծանելիք, տղամարդկանց՝ փողկապ, ընդունված է նվիրել մտերիմ մարդկանց եւ հարազատներին:

Կիրթ վարվելաձեւը ոչ միայն սովորեցնում է, թե ինչպես նվեր ընտրել, այլեւ թե ինչպես պետք է այն հանձնել եւ ինչպես ընդունել: Նվիրելիս խուսափեք այնպիսի արտահայտություններից, ինչպես «Ամբողջ օրը վազվզեցի, բայց ավելի լավ բան չգտա»:

Քաղաքավարի մարդը, նվեր ստանալիս, շնորհակալություն է հայտնում, բացում, նայում եւ կրկին շնորհակալություն հայտնում: Եվ անպայման՝ ժպիտով: Դժգոհությունը տեղին չէ, եթե նույնիսկ ձեզ մի այնպիսի բան են նվիրել, որից դուք արդեն ունեք: Հյուրը կարող է չիմանալ, եւ կարիք չկա այդ մասին նրան տեղեկացնել:

Եթե ձեզ կոնֆետներ, տորթ կամ մեկ այլ քաղցրավենիք են բերել, մի՛ մոռացեք հյուրասիրել ներկաներին:

Բոլոր դեպքերում ծաղիկները լավագույն նվերն են, այլ ոչ թե մեկ այլ նվերի հավելում: Ալ կարմիր վարդերը ընդունված է նվիրել մորը, կնոջը, քրոջը, հարսնացուին: Կարմիրը համարվում է սիրո գույն:

Դեկորատիվ ծաղկամաններով ծաղիկներ պետք է նվիրել մտերիմ մարդկանց կամ այն դեպքում, եթե գիտեք, որ տվյալ անձը ցանկանում է այդ ծաղկից ունենալ:

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՐԿԱՐ ՈՒ ԽԻՏ ԹԱՐԹԻՉՆԵՐԸ ԳԵՂԵՑԿԱՑՆՈՒՄ ԵՆ ԿԱՆԱՆՑ

Ցանկացած կին երազում է երկար ու խիտ թարթիչների մասին: Հենց դրանք են հայացքին անկրկնելի արտահայտչականություն տալիս՝ գրավելով հակառակ սեռի ներկայացուցիչներին: Բայց, ցավոք, ժամանակակից կոսմետիկ միջոցներն այնքան հագեցած են անհասկանալի բաղադրիչներով, որ ոչ միայն չեն նպաստում թարթիչների աճին, այլեւ փչացնում են դրանք: Դա վերաբերում է հատկապես թարթիչների սեւ ներկին: Որքան էլ դրանք արժենան, արդյունքը ժամանակավոր է լինում: Իսկ եթե նաեւ մոռանաք գիշերը մաքրել դիմահարդարումը, կարող եք առավոտյան առանց թարթիչի արթնանալ: Պարզվում է՝ խիտ ու գեղեցիկ թարթիչներ ունենալու համար ամենեւին էլ պետք չէ մի ամբողջ կարողություն վատնել, բավական է դիմել ժողովրդական միջոցների օգնությանը.

Ահա մի քանի բաղադրատոմսեր.

1. Թարթիչների խտության եւ աճի համար վերցրեք մի քիչ կոնյակ, կռատուկի յուղ եւ վազելին: Հավասար չափաբաժնով խառնեք եւ երկու շաբաթ շարունակ քնելուց առաջ քսեք թարթիչներին: Արդյունքը շատ արագ կնկատեք:

2. Մեկ այլ բաղադրատոմս էլ վազելինի եւ գերչակի յուղի խառնուրդն է: Արդյունքը նույնն է:

Հիշեք նաեւ, որ թարթիչների համար օգտակար է գերչակի յուղի մեջ թաթախված փոքրիկ խոզանակով կոպերի թեթեւ մերսումը: Բայց ուշադիր եղեք, որպեսզի յուղն աչքերի մեջ չլցվի:

ՀՐԱՏԱՊ

ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՅՔԱՐԵԼ ԱՎԵԼՈՐԴ ԿԻԼՈԳՐԱՄՆԵՐԻ ԴԵՄ

Գիրությունը վերջին հարյուրամյակի ամենատարածված համամարդկային հիմնախնդիրն է, որի դեմ պայքարում մարդիկ օգտագործել են հազար ու մի դիետա, բուսական ծագման հազարավոր դեղատոմսեր, թեպետ շատ մարդկանց, առանձնապես՝ կանանց, անհանգստացնող այդ երեւույթի կանխման ամփոփիչ բաղադրատոմսը այդպես էլ չհայտնաբերվեց:

Ձեզ ենք առաջարկում գիրության դեմ պայքարի ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական մի քանի մեթոդներ:

ՕՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԲԱԺԱԿ ԿԱԹԸ՝ ԲԱՐԵԿԱՁՄ ՄԱՐՄՆԻ ԵՐԱՇԽԻՔ

Գիտնականները պնդում են, որ օրական երկու բաժակ կաթը կօգնի ավելորդ քաշի դեմ պայքարում: Դա, համատեղելով դիետայի եւ համապատասխան ֆիզիկական ծանրաբեռնվածության հետ, թույլ կտա ավելի արդյունավետ կերպով ազատվել ավելորդ քաշից: Ընդ որում՝ կաթը որեւէ հակացուցում չունի: 2 տարի շարունակ իրականացվող հետազոտությունը հաստատել է այս մթերքի արդյունավետությունը: 40-65 տարեկան հետազոտվողներն օրական երկու բաժակ կաթ են խմել: 2 տարի անց, նրանցից յուրաքանչյուրն առնվազն 5 կգ է կորցրել, փոխանցում է Medvesti.com-ը:

Գիտնականները պնդում են, որ նիհարելու այս մեթոդը առողջ է, քանի որ գործընթացը ճիշտ է տեղի ունենում: Դա կանխում է նախկին քաշին վերադառնալ եւ նիհարելու գործընթացն անվտանգ է դարձնում: Մաշկը չի ձգվում, օրգանիզմը սթրես չի ապրում եւ այդ ընթացքում այրում է ճարպերը:

ԽՆՁՈՐԻ ԴԻԵՏԱ. ՅՈԹ ԿԻԼՈԳՐԱՄ՝ ՅՈԹ ՕՐՈՒՄ

Խնձորի դիետան համարվում է ամենահեշտ եւ արդյունավետ դիետաներից մեկը: Նրա տեւողությունը 7 օր է, իսկ արդյունքը՝ մոտ 7 կիլոգրամի կորուստ: Կարող են խնձորով դիետա պահել նաեւ նրանք, ում, առողջական խնդիրների պատճառով, հակացուցված են այլ դիետաները:

Յոթ օրվա համար անհրաժեշտ է. 1-ին օր՝ 1 կգ խնձոր, 2-րդ օր՝ 1,5 կգ խնձոր, 3-րդ օր՝ 2 կգ խնձոր, 4-րդ օր՝ 2 կգ խնձոր, 5-րդ օր՝ 1,5 կգ խնձոր, 6-րդ օր՝ 1,5 կգ խնձոր, 7-րդ օր՝ 1 կգ խնձոր:

Դիմանալ 7 օր, միայն խնձոր

ուտելով, շատ բարդ է, բայց արդյունքը, հավատացեք, Ձեզ կգոհացնի: Եթե սիրում եք խնձոր, ապա այս դիետան հենց Ձեզ համար է: Կարող եք խմել նաեւ կանաչ թեյ եւ ջուր, ինչքան կամենաք: Իսկ նրանք, ովքեր չեն դիմանա այս խիստ դիետային, կարող են օրվա ընթացքում խմել նաեւ 2 բաժակ կեֆիր: Իսկ ծայրահեղ դեպքում, սկսած 5-րդ օրից, կարող եք օրվա ընթացքում մի փոքրիկ կտոր սեւ հաց ուտել: Չկան սահմանափակումներ նաեւ խնձորի տեսակների, գույնի հարցում:

Բացի նիհարելուց, խնձորի դիետան օգտակար է նաեւ մի քանի հիվանդությունների ժամանակ, ինչպես տասներկումատնյա աղիքի խոցի դեպքում: Այս հիվանդությունն ունեցողները կարող են օգտագործել միայն քաղցր խնձոր: Գաստրիտի դեպքում, նույնպես օգտակար է այս դիետան, բայց հակացուցված են քաղցր խնձորները: Իսկ եթե սիրտանոթային հիվանդություններ ունեք, ապա 1 կգ խնձորին ավելացրեք մինչեւ 100 գ շաքարավազ:

ՆԻՀԱՐԵԼ՝ ՀԱՄԲՈՒՅՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Գերմանացի գիտնականները հայտարարում են՝ «Եթե ուզում եք նիհարել, բայց մարզասրահ գնալու ժամանակ չունեք, դիմեք համբույրի օգնությանը»:

Հետազոտողները պարզել են՝ համբույրը կարող է լինել լավագույն դիետան: Երեք րոպեում մեկ կրքոտ համբույրը այնքան կալորիաներ է այրում, որքան կես կիլոմետրանոց վազքը:

Բանն այն է, որ համբույրի ժամանակ արագանում է նյութափոխանակության ընթացքը, բարելավում արյան շրջանառությունը:

Ի դեպ, համբույրը օգտակար է սրտի անոթների համար, մարդու մոտ որոշակի ժամանակով արագանում են ուղեղի գործողությունները, այն նպաստում է ուշադրության կենտրոնացմանը:

Գիտնականները պարզել են, որ բուժիչ համբույրը պետք է տեւի

հենց երեք րոպե: Իսկ առավելագույն արդյունքի հասնելու համար կարեւորվում է համբուրվելիս զուգընկերոջ աչքերին նայելը:

Համբուրվողի արյան մեջ բարձրանում է ադրենալինի մակարդակը, ինչն էլ, իր հերթին, ակտիվացնում է մտավոր եւ ֆիզիկական գործունեությունը:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Մարդ տարին մեկ է ծնունդը նշում, բայց պետք է նշի ամեն առավոտ:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ
(1920-2013)
Հայ բանաստեղծ

Օ՜հ, ժամանակներ, որ անուշ եկան ու երազի պես գնացին, հանգան, իսկ ես նույնն եմ միշտ:

Ա.ՃԱՎՃԱՎԱՁԵ
(1786-1846)
Վրաց բանաստեղծ

Ով չի վտանգում իր կյանքը, նա երբեք այն ձեռք չի բերի:

ՇԻԼԼԵՐ
(1759-1805)
Գերմանացի գրող

Սերը մեր գոյության սկիզբն ու ավարտն է: Առանց սիրո, կյանք գոյություն չունի: Այդ պատճառով էլ սերն այն է, ինչի առջեւ խոնարհվում են իմաստունները:

ԿՈՆՖՈՒՑԻՈՍ
(մ.թ.ա. 551-479)
Չինացի իմաստուն

Միայն սիրտն է տեսնում: Ամենակարեւորը աչքերով չես տեսնի:

ԱՆՏՈՒԱՆ ԴԸ ՍԵՆՏ-ԷՔՋՅՈՒՊԵՐԻ
(1900-1944)
Ֆրանսիացի գրող

Հիմար հորթուկը վագրից չի վախենում:

ՉԻՆԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔ

Ոմանք մոլորվում են՝ մոլորության մեջ ընկնելու ահից:

ԼԵՍԻՆԳ
(1729-1781)
Գերմանացի գրող, փիլիսոփա

Երբ փոքր էի, երազում էի, որ մի օր գեղեցիկ արքայազնը կգա սպիտակ ձիով եւ ինձ կտանի հեռո՜ւ-հեռու:

Հիմա այդ մասին երազում է ամուսինս:

Ն.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸ à¶Ü°ð

** Ո՞նց իմանամ, թե ի՞նչ է մտածում իմ մասին իմ սիրած աղջիկը,- հարցնում է տղան հորը:*

- Ամուսնացիր հետը:

** - Դուք ի՞նչ կմտածեիք իմ մասին, տիկին, եթե ես ձեզ օդային համբույրներ ուղարկեի:*

- Որ դուք գործնական քայլերից խուսափող մարդ եք:

** - Այսօր մենք սեքսի մասին առաջին դասն ենք անցել,- դպրոցից տուն գալով՝ ասում է աղջիկը:*

- Եվ ի՞նչ պատմեցին ձեզ,- հարցնում է մայրը:

- Է՜, մայրիկ, մեկ է, դու չես հասկանա:

** Պատգամավորության թեկնածուին հարցնում են.*

- Ինչո՞ւ որոշեցիք առաջադրվել:

- Ախր, նայեք՝ ի՞նչ է կատարվում: Իշխանությունը թաղված է շքեղության, անգործության, կոռուպցիայի մեջ:

- Ուրեմն ուզում եք այդ ամենի դեմ պայքարե՞լ:

- Չէ՛, ի՞նչ եք ասում: Ուզում եմ այդ ամենին մասնակցել:

** - Սիրելի՛ս, ես քեզ շա՜տ-շատ եմ սիրում, բայց եթե իմանամ, որ ինձ դավաճանում ես, կսպանեմ:*

- Մի անհանգստացիր՝ չես իմանա:

** - Հենց մի սիրուն կին ես տեսնում, մոռանում ես, որ ես կողքիդ եմ, նեղացած ասում է կինը:*

- Հակառակը, հենց այդ պահին եմ հիշում:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 16-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին (Ռուսաստան), Ջեյմս Ուորլիքին (ԱՄՆ), Ժակ Ֆորին (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին:

Հանդիպման ժամանակ համանախագահները ներկայացրել են Բաքվում իրենց ունեցած հանդիպումների արդյունքները, ինչպես նաեւ Հայաստանի նախագահի հետ քննարկել ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի շրջանակներում նախագահական եւ նախարարական մակարդակներով հետագա հնարավոր հանդիպումների վերաբերյալ հարցեր:

Հաջորդ օրը Ստեփանակերտում կայացավ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների եւ նրանց ուղեկցող անձանց հետ:

Հանդիպմանը քննարկվել են ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը եւ տարածաշրջանային գործընթացներին վերաբերող մի շարք հարցեր:

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Դեկտեմբերի 17-ին, Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ, կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն՝ նվիրված Հայաստանի գործարար միջավայրի («Doing Business») բարելավման 2014թ. միջոցառումների ծրագրին:

Մասնավորապես, քննարկվել են «Doing Business-2014» շրջանակում ըստ պետական կառավարման մարմինների նախատեսված միջոցառումները, որոնք հնարավորություն են տալու բարելավել բիզնես միջավայրը Հայաստանում: Փաստաթղթի առնչությամբ մանրամասներով եւ դիտողություններով են հանդես եկել պատասխանատու նախարարությունների եւ գերատեսչությունների ներկայացուցիչները՝ անդրադառնալով իրենց կառույցների մասով նախատեսված միջոցառումներին: Տիգրան Սարգսյանը հանձնարարել է եւս մեկ անգամ համատեղ քննարկել հնչեցրած առաջարկությունները, որից հետո վերջնական լրամշակված փաստաթուղթը կներկայացվի Հայաստանի կառավարության հաստատմանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Դեկտեմբերի 18-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել է Ռուսաստանի, Ուկրաինայի, Եվրասիայի հարցերով ԱՄՆ պաշտպանության քարտուղարի փոխտեղակալ Էվելին Ֆարկասին:

Հանդիպման ընթացքում, անդրադարձ է կատարվել Հայաստանի մասնակցությանը միջազգային խաղաղապահ գործունեությանը, եւ կարեւորվեց Աֆղանստանում եւ Կոսովոյում խաղաղապահ առաքելություններին Հայաստանի ունեցած ներդրումը: Քննարկվել են Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները:

Արտգործնախարարն անդրադարձել է նաեւ տարածաշրջանում սպառազինությունների վերահսկման խնդիրներին, մասնավորապես՝ տարածաշրջանային խաղաղության պահպանման համար Եվրոպայում սովորական սպառազինությունների պայմանագրի արդիականացման կարեւորությանը:

Հյուրի խնդրանքով, նախարար Նալբանդյանը ներկայացրել է ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի վերջին զարգացումները, տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ Հայաստանի մոտեցումները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻԱՆՈՒՄ Է ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ GPOI ԾՐԱԳՐԻՆ

Հայաստանը դարձել է ԱՄՆ կառավարության կողմից ֆինանսավորվող խաղաղապահության նախաձեռնություններին աջակցող GPOI ծրագրի գործընկեր պետություն:

Նախաձեռնության շրջանակում, Հայաստանի խաղաղապահ կարողությունների զարգացման նպատակով, Միացյալ Նահանգներն ակնկալում են 2 տարվա ընթացքում տրամադրել մոտ 1.5 մլն ԱՄՆ դոլարի աջակցություն: Նախաձեռնությունը միտված է ամրապնդել ՄԱԿ-ի ու տարածաշրջանային խաղաղապահ գործողություններում ներգրավված գործընկեր պետությունների, ինչպիսին Հայաստանն է, կարողությունները: Այս նոր գործընկերությունը Հայաստանի եւ Միացյալ Նահանգների սերտ համագործակցության լուրջ ազդակ է, որով կարեւորվում ու գնահատվում է Հայաստանի պատրաստակամությունը մասնակցել միջազգային խաղաղապահ գործողությունների Կոսովոյում, Աֆղանստանում եւ Լիբանանում: GPOI ծրագիրը ֆինանսավորվում է Խաղաղապահ գործողությունների հաշվից, որը տնօրինում է ԱՄՆ պետքարտուղարության ռազմաքաղաքական գործերի գրասենյակը: GPOI ծրագիրը ներկայումս գործակցում է 69 երկրների ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ:

4,8 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2010 թվականի բյուջետային օժանդակության գործառույթների շրջանակներում, 2013 թվականի համար նախատեսված 6 մլն եվրո ընդհանուր փոփոխական հատկացման հիման վրա, Եվրոպական միությունը փոխանցում է Հայաստանի կառավարությանը 4,8 մլն եվրո դրամական հատուցում՝ Եվրոպական հարեւանության քաղաքականության Գործողությունների ծրագրում ամրագրված Պետական ֆինանսների կառավարման, հանրային հատվածի թափանցիկության բարձրացման եւ Եվրոպական միության ու միջազգային առեւտրային չափանիշի հետ ներդաշնակեցման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների դիմաց:

Այն հանդիսանում է Եվրոպական միության եւ Հայաստանի կառավարության միջեւ 2010 թվականին համաձայնեցված Բյուջետային օժանդակության գործառույթների մի մասը: Բյուջետային օժանդակության ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի կառավարության գանձապետարանի միջոցով:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 21 մլն եվրո, որից 20 մլն եվրոն հանդիսանում է բյուջետային օժանդակություն: Վերոնշյալ՝ 4,8 մլն եվրո վճարումը հետեւում է 2011 թվականի դեկտեմբերին կատարված 8 մլն եվրո վճարմանը՝ կազմելով ընդհանուր առմամբ 12,8 մլն եվրո: 1 մլն եվրոն տրամադրվում է, որպես տեխնիկական աջակցություն, Հայաստանի պետական մարմիններին եւ նշյալ ոլորտներում ակտիվ ոչ պետական հաստատություններին:

Վճարման ծավալի նվազումը, նշյալ տրանշով հաստատված 6 մլն եվրո ֆինանսավորման համեմատ, պայմանավորված է այն փաստով, որ չեն բավարարվել երկու պայմաններ, որոնք կապված են նորաստեղծ Պետական գնումների բողոքարկումների խորհրդի գործառնական կարողությունների հետ եւ արտաքին աուդիտի ոլորտում առաջարկությունների իրականացման մանրամասների հրապարակմամբ:

ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ ՄՇԱԿՎՈՂ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում 2013 թվականին մշակվող ցանքատարածությունների մակերեսը 2010թ. համեմատ աճել է 12,41 տոկոսով եւ կազմել մոտ 320 հազար հեկտար: 2010թ. Հայաստանում մշակվում էր 283,6 հազար հեկտար ցանքատարածություն՝ ընդհանուր 449,2 հազար հեկտար վարելահողերից:

Գյուղատնտեսության նախարարի հրամանով, տարվա մեջ 2 անգամ մարզպետարաններում տեղի են ունեցել շահագրգիռ քննարկումներ՝ միտված երկրում հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Արդյունքում՝ ունենք հետեւյալը. 2010 թվականից մինչ օրս նվազման տենդենցը կանգ է առել, եւ 283,6 հազար հեկտարից 2013 թվականին օգտագործվող ցանքատարածությունները կազմել են 318,8 հազար հեկտար, այսինքն՝ շուրջ 35 հազար հեկտարով ավելացել են մշակվող ցանքատարածությունները: Դա հանգեցրել է գյուղմթերքների արտադրության ծավալների աճին:

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԱՅՐԸ՝ ԱԶԱՏ ՍԱՐԳՍՅԱՆԸ



Դեկտեմբերի 16-ին, 84 տարեկան հասակում, Ստեփանակերտում վախճանվել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հայրը՝ Ազատ Ավետիսի Սարգսյանը:

«Վրաստան» թերթի խմբագրությունը հայտնում է իր վշտակցությունը եւ ցավակցում Սարգսյանների ընտանիքին:

ԱՄՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 17-ին Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանն ընդունել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հայաստանյան առաքելության ղեկավար Մարկ Հորթոնի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ժամանակ կողմերը քննարկել են Հայաստան-ԱՄՀ համագործակցության հետագա ընթացքը եւ հեռանկարները: Այս համատեքստում արծարծվել են Հայաստանի տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններին եւ տնտեսության զարգացման միտումներին վերաբերող հարցեր:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄ

Փարիզում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում, դեկտեմբերի 16-17-ին կայացավ Զինված հակամարտության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954թ. Հաագայի կոնվենցիայի Երկրորդ արձանագրության անդամ պետությունների 5-րդ հանդիպումը: Հանդիպման շրջանակներում, դեկտեմբերի 17-ին կայացան Զինված հակամարտության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեի անդամների ընտրությունները: Քվեարկության արդյունքում, Հայաստանը դարձավ կոմիտեի անդամ՝ 4 տարի ժամկետով:

ՆՎԱԶԵԼ Է ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Հայաստանում մանկական մահացության դեպքերը նվազել են: Նվազել են նաեւ ծնելիության դեպքերը: Այս տարվա հունվար-սեպտեմբերին 0-1 տարեկան տարիքային խմբում գրանցվել է 303 մահացության դեպք, անցած տարվա 351-ի փոխարեն:

Իսկ ինչ վերաբերում է ծնելիությանը, ապա այս տարվա հունվար-սեպտեմբերին Հայաստանում ծնվել է 30 հազար 447 երեխա, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 31 հազար 55-ի փոխարեն:

Հայաստանում 13,7 %-ով ավելացել է նաեւ ամուսնալուծությունների թիվը: Նվազել են ամուսնությունների գրանցման դեպքերը՝ նախորդ տարվա 13 հազար 828 դեպքից դառնալով 13 հազար 473:

ՀԱՄԱՆԵՐՄԱՄԲ ԱԶԱՏՎԵԼ Է 679 ԳԱՏԱՊԱՐՏՅԱԼ

Հայաստանի արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից, 2013 թվականի դեկտեմբերի 16-ի դրությամբ, համաներմամբ ազատ է արձակվել 679 դատապարտյալ: Համաներումն իրականացել է Հայաստանի Ազգային ժողովի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման համաձայն:

ՀՈՒՆՎԱՐԻ ՄԵԿԻՑ՝ ԱՆՁՆԱԳՐԻ ՆՈՐ ՆՄՈՒՇՆԵՐ

Հայաստանի քաղաքացիները հունվարի 1-ից չեն ստանա հին նմուշի անձնագրեր: Գործող անձնագրերի ժամկետը լրանալուց հետո, դրանք կփոխարինվեն երկու փաստաթղթով՝ նույնականացման քարտով, որն ամբողջությամբ կիրառելի կլինի Հայաստանում եւ կփոխարինի գործող անձնագրին՝ Հայաստանում ցանկացած ծառայությունից օգտվելու ժամանակ, եւ ճամփորդական փաստաթղթով՝ կենսաչափական չիպի անձնագրով: Օրենքով դրանք կտրվեն 15 աշխատանքային օրում, եթե քաղաքացիներն ուզում են ավելի շուտ ստանալ, ապա պետք է վճարեն լրացուցիչ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

26.12.2013. Սուրբ Պետրոս եւ Պողոս առաքյալների հիշատակության օր

Սուրբ Պետրոսը Տիրոջ 12 առաքյալներից էր, Անդրեաս առաքյալի եղբայրը: Նա Հիսուսի ամենասիրված առաքյալներից էր, Տիրոջ Պայծառակերպության եւ Հիսուսի հետ կապված կարեւոր մյուս դեպքերի ականատեսը: Նա ձկնորս էր, որի թլփատության անունը Շմավոն էր, իսկ հունարեն՝ Սիմոն: Նրան Քրիստոս ասում է. «Դու Հովնանի որդի Սիմոնն ես. դու պիտի կոչվես Կեփաս»: «Կեփաս» նշանակում է «վեմ», հունարեն՝ Պետրոս: Սուրբ Պետրոսն առավելաբար հայտնի է ավետարանական այն դրվագից, երբ նա Հիսուսին դավանում է որպես Կենդանի Աստծո Որդի: Եվ Հիսուս հաստատում է, որ այդ դավանության, այսինքն՝ Քրիստոս որպես աշխարհի Փրկիչ եւ Աստվածորդի, պիտի կառուցի իր եկեղեցին: Հիսուսի ձերբակալման գիշերը Պետրոսը երիցս ուրացել է Նրան, սակայն հետո խորապես զղջացել: Նրա կարեւոր գործերից էր հեթանոսների ներգրավումը եկեղեցի: Հերովդես թագավորը ձերբակալել է նրան, բայց հրաշքով ազատվել է բանտից: Ըստ ավանդության, նահատակվել է Հռոմում՝ գլխիվայր խաչվելով: Մեզ են հասել նրա երկու ընդհանրական նամակները:

Սուրբ Պողոսը Տիրոջ 13-րդ առաքյալն է: Ծնվել է Կիլիկիայի Տարսոն քաղաքում, առաջին դարի սկզբներին, հռոմեական քաղաքացիություն ունեցող հրեա ծնողներից: Նրա վկայության համաձայն, եղել է փարիսեցի, խստորեն պահպանել օրենքի տառն ու հալածել քրիստոնյաներին: Սակայն, Դամասկոսի ճանապարհին Հիսուս երեւացել է նրան, որից հետո Սողոսը՝ հետագայում Պողոս առաքյալը, դարձել է Ավետարանի ամենաեռանդուն քարոզիչը: Նրան մկրտել է Անանիա առաքյալը: Կատարել է մի քանի ճանապարհորդություններ՝ քարոզելով Աստծո խոսքը: Մեզ են հասել նրա 14 թուղթը: Ըստ ավանդության, նահատակվել է Հռոմում, 67 թվականին, Ներոնի հալածանքների ժամանակ եւ գլխատվել: Հայ Առաքելական եկեղեցին Սուրբ Պետրոս եւ Պողոս առաքյալների հիշատակի օրը տոնում է Սուրբ Ծննդին նախորդող Ավագ տոների ժամանակ:

ԵՐԿԱԹՈՒՂԻ

ԹԲԻԼԻՍԻ - ԵՐԵՎԱՆ ԳՆԱՑՔԸ ՁՄՌԱՆԸ ԿԱՇԽԱՏԻ ՕՐԸՆԴՄԵՋ

Թբիլիսի - Երեւան ուղեւորատար գնացքն ընթացիկ ձմռանը կաշխատի օրընդմեջ՝ պահանջարկի բացակայությամբ պայմանավորված: Տոմսերի արժեքի բարձրացում չի նախատեսվում:

Այդ մասին դեկտեմբերի 19-ին հրավիրված ասուլիսում նշեց «Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Վիկտոր Ռեբեցը: «Երեւան-Թբիլիսի ուղեւորատար գնացքի աշխատանքի գրաֆիկը ձմռան համար սահմանված է օրընդմեջ: Զույգ օրերին գնացքը կմեկնի Երեւանից, կենտ օրերին՝ Թբիլիսիից»,- ասաց Ռեբեցը: Նա նշեց դեկտեմբերին Երեւանից Թբիլիսի ուղեւորափոխադրումների քանակի որոշակի աճի մասին: Հաջորդ տարի ՀԿԵ-ի գնային քաղաքականության մեջ տոմսերի արժեքի բարձրացում չի նախատեսվում:

ՀԿԵ-ն իրականացնում է ուղեւորափոխադրումներ դեպի Բաթումի (հունիսից՝ սեպտեմբեր) եւ Թբիլիսի (հոկտեմբերից՝ հունիս): 2012 թվականին միջազգային ուղեւորափոխադրումների ծավալները 2008-ի համեմատ եռապատկվել են, իսկ Երեւան-Բաթումի-Երեւան ուղղությունով՝ աճել 6 անգամ:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՎՃԱՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու նախաձեռնությամբ, Արդարադատության տունը սկսել է անվճար անձնական վկայականներ հանձնել մանկավարժներին: Այդ մասին հայտնեց Թեա Ծուլուկիանին, որը, կրթության նախարար Թամար Սանիկիձեի հետ միասին, հանդիպում ունեցավ հանրային եւ մասնավոր դպրոցների ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ավարտին, նախարարները տասը մանկավարժներին հանձնեցին անձնական վկայականները:

Ամանորյա այդ ակցիան կմեկնարկի դեկտեմբերի 23-ին եւ կշարունակվի մինչեւ հունվարի 23-ը:

Դրա շրջանակներում, անվճար անձնական վկայականներ կարող են ստանալ բոլոր հանրային եւ մասնավոր դպրոցների այն մանկավարժները, ովքեր մինչ այդ վկայականը չէին ստացել: Նրանք ոչ մի փաստաթուղթ չեն ներկայացնելու, նույնականացումը կիրականացնի տվյալների բազայի հիման վրա:

Թբիլիսիում ուսուցիչները պետք է դիմեն ժամանակավոր սերվիս-կենտրոններին:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ԴՅՈՒՐԱՑՎՈՒՄ Է ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Ինչպես հայտարարել է ՆԳ նախարարության մամլո ծառայությունը, մեքենա վարելու դյուրացված թեստին ընդհանուր ունակությունների թեստը չի ավելացվի:

Քննությանը ունակությունների թեստը չի ավելացվի: Տեսական մասում փոփոխություններ չեն լինի, նշված է գերատեսչության հաղորդագրության մեջ:

Հիշեցնենք, որ դեկտեմբերի 16-ից ուժի մեջ է մտել վարորդական իրավունքի ստացման համար քննության նոր կարգը: Բնակչությանը տրվել է փոխանցման ավտոմատ խցիկով ավտոմեքենաների վրա էլ քննություն հանձնելու իրավունք:

ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ

ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների տարեվերջյան վարկանիշային աղյուսակը: Վրաստանի հավաքականը պահպանել է նախորդ աղյուսակում զբաղեցրած դիրքերը եւ, 330 միավորով, գտնվում է 101-րդ տեղում: Մեկ հորիզոնականով ետընթաց է ունեցել Հայաստանի թիմը: Այն 716 միավորով 35-րդն է:

Լավագույն հավաքականների առաջին տասնյակում փոփոխություններ չեն կայացել: Կրկին աղյուսակը գլխավորում է Իսպանիայի հավաքականը: Լավագույն տասնյակում ընդգրկված են նաեւ Գերմանիայի, Արգենտինայի, Կոլումբիայի, Ուրուգվայի, Պորտուգալիայի, Իտալիայի, Շվեյցարիայի, Նիդերլանդների եւ Բրազիլիայի հավաքականները:

Ուկրաինայի հավաքականը 18-րդն է, իսկ Ռուսաստանինը՝ 22-րդը: Ադրբեջանի թիմը 363 միավորով զբաղեցնում է 94-րդ հորիզոնականը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ՍՈՉԻԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ իր երկրի մարզիկները կմասնակցեն 2014 թվականի փետրվարի 7-23-ը Սոչիում կայանալիք ձմեռային օլիմպիական խաղերին: Ընդսմին, Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ սպորտը պետք է ազատ լինի քաղաքականությունից:

Նշենք, որ մինչ այդ, Իրակլի Ղարիբաշվիլին տեղեկացրել էր, որ Վրաստանը Սոչիի օլիմպիական խաղերին կառավարական պատվիրակություն չի ուղարկի:

«Վրաստան» թերթի աշխատակազմը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը խորապես վշտացած են թերթի նախկին աշխատակից, Վրաստանի վաստակավոր ժուռնալիստ, մի քանի գրքերի հեղինակ

Սերգեյ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի հարազատներին ու բարեկամներին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Պատճառ, առիթ: 9.Բույսերի ...: 10.Ծնունդով ջավախքցի, սպորտային մեկնաբան ... Գիլոյան: 11.Նույն ազգի ներկայացուցիչ: 12.Թբիլիսիի Խոջիվանքում թաղված, պրոլետարական գրող ... Հակոբյան: 14.Հովհ.Թումանյանի հերոս ... Կարո: 16.Վրաստանի ... ջոկատ: 18.Լռություն, ոչ մի ձայն (ժող.): 20.Քաղաք Հայաստանում: 21.Հնագիտական ...ներ: 25.Արեւմտահայ գրող ... Մեծարենց: 26.Սիրտ կեղեքող, սրտաճմլիկ: 27.Ծառա, հարուստի մոտ աշխատող: 28.Առաջին եռանիշը: 29.... ուժ: 31.Բելառուսի մայրաքաղաքը: 32.Թելատու բույս: 34.Կաթնամթերք: 38.Լեփ-...: 39.Փաստաբան: 41.Տարվա եղանակ: 42.Երկու մասի բաժանել: 43.Բռնակալ, տեր: 44.Հայ անվանի դուդուկահար ... Գասպարյան: 45.Իրար միացված: 46.Կիզող, այրող:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի նախկին դերասանուհի Վեներա ...: 2.Սրտի բժիշկ: 3.Սայաթ-Նովան Սանահինի վանքում: 4.Թեւատակի հարմարանք քայլելու համար: 5.Սեղմ, հակիրճ, ամփոփված: 7.Հայկական լարային նվագարան: 8.Լեղին ջուր կտրած, շատ վախեցած: 13.... Լի: 14.... դառնալ: 15.Ամուսինների բաժանում: 17.Որեւէ բանում ... մտցնել: 19.Նետահար զինվոր: 20.Ձղայնանալ, ափերից դուրս գալ: 22.Ձնախառն քամի: 23.Հայոց թագավոր: 24.Հայ գուսան: 25.Գեղեցիկ ծաղիկ: 29.Ֆլան-...: 30.Փոքրիկ նավ: 31.Հայաստանի քաղաքներից: 33.Շրջիկ մանրավաճառ: 35.Երգչի ձայն: 36.Երկարապոչ, սեւ թռչուն: 37.Ոտքի հետք: 39.Հայ ֆիդայի Նիկոլ ...: 40.Քաղաք Ֆրանսիայում:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ռեդյարդ: 9.Իզմիթ: 10.Գինձ: 11.Բեռլիոզ: 13.Ազդել: 16.Սան: 17.Վեհ: 19.Սեսիա: 22.Ապագա: 24.Սուլեմա: 25.Վիտո: 27.Սատիրա: 29.Բետոնե: 32.Կռունկ: 33.Լեգեոն: 35.Անկե: 38.Գեա: 40.Պրկել: 41.Չկամ: 44.Կպած: 47.Ալի: 48.Կնիկ: 50.Աթիան: 51.Հմա: 52.Քե: 53.Ձիլ: 54.Չոր: 55.Հաստ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Խերես: 2.Քյոլն: 3.Օրգով: 4.Բիձա: 5.Ումուդ: 6.Գթալ: 8.Դիզել: 12.Ռաջա: 14.Ձտել: 15.Եսիմ: 18.Ձաիր: 19.Սուրեն: 20.Սերո: 21.Ասրե: 23.Գվինեա: 26.Տակն: 28.Արեգ: 29.Բուհ: 30.Տկար: 31.Նիկե: 34.Գելաթի: 36.Նկան: 37.Ելակետ: 39.Նալ: 42.Կանչ: 43.Միհր: 45.Պազ: 46.Ծիլ: 48.Կահ: 49.Իքս:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445